Արձանագրություն N 4

**ՀՀԱՆ-ԳՀԾՁԲ-18/2** ծածկագրով <**գնանշման հարցում**> գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

23 փետրվարի 2018թ
ժամը՝ 09:30

Մասնակցում էին հանձնաժողովի՝

Նախագահ՝ Սարգիս Ստեփանյան

անդամներ՝ Էրիկ Համբարձումյան, Ոսկի Ֆոանգուլյան,

քարտուղար՝ Սևակ Պետրոսյան

I. Հայտերի վերագնահատման մասին

---

(Սարգիս Ստեփանյան)

**1. Ընդունել ի գիտություն, որ**

ա/ <**ՄԱՐԻ-ՍՏԵԳ**> **ՍՊԸ**-ն ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված "Գնումների գործընթացի կազմակերպման" կարգի 45-րդ կետով սահմանված ժամկետում ներկայացրել է լրացուցիչ տեղեկատվություն՝ կարգի 43-րդ կետի 3-րդ մասով նախատեսված տվյալների վերաբերյալ (կցվում է սույն արձանագրությանը):

2. **Հիմք ընդունելով հայտերի գնահատման արդյունքները գնահատող հանձնաժողովը որոշեց.**

ա/ <**ՄԱՐԻ-ՍՏԵԳ**> **ՍՊԸ**-ի ներկայացրած հայտը մերժել

բ/ <**ՄԱՐԻ-ՍՏԵԳ**> **ՍՊԸ**-ի վերաբերյալ տվյալները՝ ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված "Գնումների գործընթացի կազմակերպման" կարգի 45-րդ կետով սահմանված կարգով և ժամկետում **չներկայացնել** ՀՀ ֆինանսների նախարարություն

գ/ **ՀՀԱՆ-ԳՀԾՁԲ-18/2** ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչել <**Գաուդեամուս**> **ՍՊԸ**-ին

**Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ - 0:**

Գնահատող հանձնաժողովի

նախագահ՝ Ս.Ստեփանյան

անդամներ՝ Ո. Ֆոանգուլյան

Է.Համբարձումյան

քարտուղար՝ Ս.Պետրոսյան

*« ՀՀ արդարադատության նախարարության*
*աշխատակազմ»-ի կարիքների համար*
*«Գրավոր թարգմանության ծառայությունների» ձեռքբերման*
*Նպատակով հայտարարված գնանշման հարցման*
*ՀՀԱՆ-ԳՀԾՁԲ-18/2 ծածկագրով*
*Գնահատող հանձնաժողովին*

«Մարի-Ստեղ» ՍՊԸ-ից
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Նանսենի փ., 7 շ., 22 բն.
հեռ: (098) 100 801
Էլ.փոստ՝ karen.margaryan.75@list.ru

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետի համաձայն <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին: ***Սույն կարգի 44-րդ կետով սահմանված մասնակցության իրավունք չունենալու հիմքերի առկայության դեպքում սույն կետով նախատեսված տվյալները չեն ներկայացվում լիազորված մարմին, եթե մասնակիցը կամ կոմիտեն լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացրել է մինչև հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստին հաջորդող երրորդ աշխատանքային օրը:***

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետի պահանջներով ՀՀԱՆ-ԳՀԾՁԲ-18/2 ծածկագրով գնահատող հանձնաժողովին եմ ներկայացնում ՀՀ ԿԱ ՊԵԿ Աշխատակազմի հարկ վճարողների սպասարկման վարչության թիվ 3 բաժնի կողմից 20.02.2018 թվականին ներկայացրած տեղեկանքը, որից ակնհայտ է դառնում, որ «ՄարիՍտեղ» ՍՊԸ-ն <<ՀՀԱՆ-ԳՀԾՁԲ-18/2>> ծածկագրով ընթացակարգին հայտ ներկայացնելու օրը, այն է՝ 02.02.2018 թվականին, չի ունեցել ժամկետանց հարկային պարտավորություն:

Միևնույն ժամանակ հիշեցնում եմ, որ նույն 45-րդ կետի համաձայն մասնակցի տվյալները չեն ներկայացվում լիազորված մարմին, եթե մասնակիցը կամ կոմիտեն լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացրել է մինչև հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստին հաջորդող երրորդ աշխատանքային օրը:

Միևնույն ժամանակ հիշեցնում եմ, որ սոց. վճարումների մասով հարկերը, չի կարող դիտվել որպես ժամկետանց հարկային պարտավորություն:

Հարգանքով՝
«Մարի-Ստեղ» ՍՊԸ-ի տնօրեն Ս. Խաչատրյան

21.02.2018թ.

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ
ԹԻՎ 3ԲԱԺԻՆ

0051 ՀՀ ք.Երևան Դեղատան 3, հեռ 011544287

"20" 02 2018թ. N 993

# ՏԵՂԵԿԱՆՔ

*Հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների, դեբետային գումարների, սահմանված չափից ավել վճարված գումարների և միասնական հաշվում առկա գումարների վերաբերյալ*

Տրվում է առ այն, որ 02.02.2018 թվականի դրությամբ    ՄԱՐԻ ՍՏԵԳ ՍՊԸ    ՀՎՀՀ 02615956

հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների մասով պարտավորությունները, դեբետային գումարները, սահմանված չափից ավել վճարված գումարները և միասնական հաշվում առկա գումարները, տեղեկատվական բազայում առկա տեղեկությունների հիման վրա, կազմում են՝

| Հարկի կամ վճարի անվանումը | Հարկի կամ վճարի չափը | Տույժը | Տուգանքը | Պարտավորության չափը (ընդամենը) |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| Ավելացված արժեքի հարկ | | | | |
| Ներմուծման մասով ավելացված արժեքի հարկ | | | | |
| Շահութահարկ | | | | |
| Եկամտային հարկ | | | | |
| Ակցիզային հարկ | | | | |
| Ներմուծման մասով ակցիզային հարկ | | | | |
| Շրջանառության հարկ | | | | |
| Արտոնագրային հարկ | | | | |
| Բնապահպանական հարկ և բնօգտագործման վճար | | | | |
| Ներմուծման մասով բնապահպանական հարկ | | | | |
| Ոչ ռեզիդենտի շահութահարկ | | | | |
| Սոցիալական վճար (ամսական) | 7912 | 664 | | 8,576 |
| Սոցիալական վճար (տարեկան) | | | | |
| Պետական տուրք | | | | |
| Ռոյալթի | | | | |
| Հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճար | | | | |
| Ճանապարհային հարկ | | | | |
| Հաստատագրված վճար | | | | |
| Պարզեցված հարկ | | | | |
| Եկամտահարկ | | | | |
| Պարտադիր սոցիալական ապահովության վճար | | | | |
| Տուգանքներ և վնասի հատուցման գումար | | | | |
| Ընդամենը | 7,912 | 664 | | 8,576 |

| Դեբետային մնացորդ | | Սահմանված չափից ավել վճարած գումարներ | Միասնական հաշվում առկա գումար |
|---|---|---|---|
| Ավելացված արժեքի հարկ | Ակցիզային հարկ | | |
| 6 | 7 | 8 | 9 |
| | | 23,334 | |

Տեղեկանքը տրվում է ներկայացնելու ՀՀ Արդարադատության Նախարարություն

ԲԱԺՆԻ ՊԵՏ    Ա.ԳԵՎՈՐԳՅԱՆ

Տեղեկանքը կազմող աշխատակից ____ Հ.Ֆոնզյան
(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

<.....>...........2018թ

Սույն տեղեկանքը տրվում է տեղեկանքի տրամադրման օրվա դրությամբ հարկային մարմնի տեղեկատվական բազայում առկա [illegible] կարող է փոփոխվել հսկողական միջոցառումների արդյունքում կամ հարկ վճարողի գործունեության վերաբերյալ նոր տվյալներ առա[illegible]: